ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N«ԳԻՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/1»

ք. Գյումրի«05» դեկտեմբերի 2017թ.

<<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ-ը ի դեմս Կ.Տոնոյանի,որը գործում է<<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ-իկանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Ռոզա-92>>ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Անտիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողըպարտավորվումէսույնպայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանվածկարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեովԳնորդինմատակարարելպայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկականբնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսվածապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդըպարտավորվումէընդունելապրանքըևվճարելդրահամար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են15օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով,ծավալներով,ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2175700 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համա կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցությա հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կա կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցությա

---

[2] *Պայմանագիրը«Գնումների մասին» ՀՀօրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվ է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվե համաձայնագիր:*

միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[4]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[5]:

8.8 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտչիվերացելապրանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարածգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցոչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարմանհամար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[6]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	«ՌՈԶԱ-92» ՍՊԸ
ք.Գյումրի, Շիրակացի 21	Ա. Անտիկյանի
Հայէկոնոմբանկ ԲԲԸ Գ/Մ	Հասցե՝ ք. Գյումրի, Թետչերի
Հ/Հ 163128117575	5<<Ինեկոբանկ>>ՓԲԸԳ/Մ
ՀՎՀՀ 05533967	Հ/Հ 20501220200310001
	ՀՎՀՀ 02518416
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված
« 05 »դեկտեմբերի 2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	15811100	Հաց	Հայաստան	Ցորենի 1-ինտեսակիալյուրիցպատրաստված, ՀՍՏ 31-99: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներիև "Մննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի:Պիտանելիությանմնացորդայինժամկետըոչպակասքան 90 %: *Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	330	396000	1200	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	1200	2018թ. Դեկտեմբերի 15
2	15851100	Մակարոն	Ռուսաստանիդաշնություն	Մակարոնեղեղենանդրոժխմորից, կախվածայուրիտեսակիցևորակից՝ Ա տիպի (պինդցորենիալյուրից), չափածրարված 1-5կգ փաթեթավորումով :Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ "Մննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի: *Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	370	111000	300	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	300	2018թ. Դեկտեմբերի 15
3	15612180	Բարձր տեսակի ցորենի ալյուր	Հայաստան	Ցորենիալյուրինբնորոշ, առանցկողմնակիհամիևհոտիառանցթթվության անևդառնության, առանցփտահոտիուբորբոսի: Խոնավությանզանգվածայինմասը՝ոչավելի 15 %-ից, ՀՍՏ 280-2007: Անվտանգությունըևմակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներիև "Մննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի: *Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	310	31000	100	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	100	2018թ. Դեկտեմբերի 15
4	15511100	Կաթ պաստերիզացված	Հայաստան	Պաստերացվածկովիկաթ 3 % ոչպակաս, յուղայնությամբ, Անվտանգությունըևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Նորոշմամբհաստատված «Կաթին, կաթնամթերքինևդրանցարտադրությանընթերակայացվողպահանջներիտեխնիկականոնակարգի» և	լիտր	450	45000	100	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	100	2018թ. Դեկտեմբերի 15

				«Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի: *Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*							
5	15551600	Մածուն կովի կաթից	Հայաստան	Թարմկովիկաթից, յուղայնությունը 3%-իցոչպակաս, թթվայնությունը 65-1000Т,:անվտանգությունըևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Նորոշմամբհաստատված «Կաթին, կաթնամթերքինևդրանցարտադրությանըներկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի: *Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	500	50000	100	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	100	2018թ. Դեկտեմբերի 15
6	15541200	Պանիր չանախ	Հայաստան	Սպիտակաղաջրայինպանիր, կովիկաթից, 40-50% յուղայնությամբ:Անվտանգությունըևմակնշումը՝ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Նորոշմամբհաստատված «Կաթին, կաթնամթերքինևդրանցարտադրությանըներկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի: *Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	2700	189000	70	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	70	2018թ. Դեկտեմբերի 15
7	15530000	Կարագ սերուցքային	Հայաստան	Սերուցքային, յուղայնությունը՝ 2,5-82,9%, բարձրորակի, թարմվիճակում, պրոտեինիպարունակությունը 0,6-1 գ, ածխաջուր 0,7-1 գ, 659-740 կկալ ,*գործարանայինփաթեթներով:*Անվտանգությունըևմակնշումը՝ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Նորոշմամբհաստատված «Կաթին, կաթնամթերքինևդրանցարտադրությանըներկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածՊարտադիր պահանջ՝ *արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	4700	329000	70	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	70	2018թ. Դեկտեմբերի 15
8	15421100	Արևաածաղիկի ձեթ ռաֆինացված	Ռուսաստանիդաշնություն	Պատրաստվածարևաածաղկիսերմերիլուծամզմանևճզմմանեղանակով, բարձրտեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, մակնշումը՝ "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի: *Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:նշումով:*	լիտր	800	160000	200	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	200	2018թ. Դեկտեմբերի 15
9	03142500	Ձու	Հայաստան	Ձուսեղանի, 1-րդկարգի, տեսակավորվածըստմեկնվիճանգվածի, ՀՍՏ 182-2012: Անվտանգությունըևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2011 թվականիսեպտեմբերի 29-ի «Ձվիևձվամթերքիտեխնիկականկանոնակարգ	հատ	85	212500	2500	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	2500	2018թ. Դեկտեմբերի 15

				ըհաստատելումասին» N 1438-Նորոշմանը և «Մննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի:Պիտանելիությանմնացորդայինժամկետըոչպակասքան 90 %: *Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*							
10	15332290	Ձեմեր	Հայաստան	Ձեմ՝0.5-1 կգ տարրաններով, տարբերմրգերի, 1-ինտեսակիՀUS 48-2007: Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ «Մննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի:*Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	1900	38000	20	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	20	2018թ. Դեկտեմբերի 15
11	15333100	Տոմատի մածուկ	Հայաստան	Բարձրկամառաջինտեսակների, ապակեկամմետաղյատարաներով, փաթեթավորումը՝ 0.5-1կգ տարողությամբ տարրաներով.: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներիև «Մննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի :*Պարտադիր պահանջ՝ արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	1400	28000	20	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	20	2018թ. Դեկտեմբերի 15
12	15331153	Ոսպ ամբողջական	Հայաստան	Համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Մննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	880	105600	120	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	120	2018թ. Դեկտեմբերի 15
13	15614300	Բրինձ մաքրված	Հայաստան	Սպիտակ, բարձրտեսակի, չկոտրած, խոնավությունը 13%- 15%: Անվտանգությունըևմակնշումը՝ ըստՀՀկառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Նորոշմամբհաստատված , Հացահատիկին, դրաարտադրմանը, պահմանը, վերամշակմանըևօգտահանմանըներկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի" և "Մննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի.*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	550	121000	220	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	220	2018թ. Դեկտեմբերի 15
14	15616000	Հնդկածավար	Հայաստան	Հնդկածավարխոնավությունը՝ 14,0 %-ից ոչավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչպակաս: 1-5 կգ չափածրարված:Անվտանգությունըևմակնշումը՝ըստՀՀկառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Նորոշմամբհաստատված "Հացահատիկին, դրաարտադրմանը, պահմանը, վերամշակմանըևօգտահանմանըներկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի" և "Մննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-դրդհոդվածի:Պիտանելիությանմնացորդայինժամկետըոչպակասքան 70 % :*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված*	կգ	750	150000	200	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	200	2018թ. Դեկտեմբերի 15

				արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:							
15	15617000	Ցորենաձավար	Հայաստան	Ստացվածցորենիթեփահանհատիկներիհողմամբ, ցորենիհատիկներըլիինենհողկվածծայրերովկամ հողկվածկլորհատիկներիձևով,1-5 կգ չափածրարված, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբայինխառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստ-վածբարձրևառաջինտեսակիցորենից, անվտանգությունըևմակնշումը՝ըստՀՀկառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Նորոշմամբհաստատված,"Հացահատիկին, դրարտադրմանը, պահմանը, վերամշակմանըևօգտահանմանըներկայացվող պահանջներիտեխնիկականկանոնակարգի" և "Մննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի:*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	370	25900	70	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	70	2018թ. Դեկտեմբերի 15
16	15618000	Բլղուր	Հայաստան	Ձավարցորենի I տեսակիստացվածցորենիթեփահանհատիկներիհողմամբ, հետագակոտրատմամբ, ցորենիհատիկներըլիինումենհողկվածծայրերովկամհողկվածկլորհատիկներիձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբայինխառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստվածբարձրևառաջինտեսակիցորենից, 1-5 կգ չափածրարված :Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ «Մննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի:*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	500	65000	130	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	130	2018թ. Դեկտեմբերի 15
17	15623200	Սպիտակաձավար	Հայաստան	Պատրաստվածկոշտևափափուկցորենից, : 1-5 կգ չափածրարված Անվտանգությունըևմակնշումը՝ N2-III-4,9-01-2003 / ՍանՊին 2,3,2-1078-01/ սանիտարահամաճարակայինկանոններիևնորմերիև<<Մննդամթերքիանվտանգությանմասին>>ՀՀօրենքի 9-րդհոդվածի*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված, արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	450	9000	20	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	20	2018թ. Դեկտեմբերի 15
18	15831000	Շաքարավազ սպիտակ	Հայաստան	Սպիտակգույնի, սորուն, քաղցի, առանցկողմնակիհամիևհոտի /ինչպեսչորվիճակում, այնպեսէլլուծույթում/: 1-5 կգ չափածրարված Շաքարիլուծույթըպետքէլինիթափանցիկ, առանցչլուծվողնստվածքիևկողմնակիխառնուկների, սախարոզիզանգվածայինմասը՝ 99,75%-ից ոչ պակաս /չորնյութիվրահաշված/, խոնավությանզանգվածայինմասը 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկներիզանգվածայինմասը 0,0003%-ից ոչ ավելՀՈՍ 21-94 կամհամարժեք: Անվտանգությունը՝ N2-III-4,9-01-2003 / ՍանՊին 2,3,2-1078-01/	կգ	420	46200	110	Ք. Գյումրի Շիրակացի 212 <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	110	2018թ. Դեկտեմբերի 15

				սանիտարահամաճարակայինկանոններիևնորմերիև<<Մնդամթերքիանվտանգությանմասին >>ՀՀօրենքի 9-րդհոդվածի:*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*							
19	15872400	Աղ կերակրի մանր	Հայաստան	Կերակրիաղ՝ բարձրտեսակի, յոդացվածՀՍՏ 239-2005 : 1 կգ չափածրարված:Պիտանելիությանժամկետը տարդրմանօրվանիցոչպակաս 12 ամիս: *Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	250	17500	70	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	70	2018թ. Դեկտեմբերի 15
20	15871256	Պղպեղ / կարմիր աղացած/	Հայաստան	Ընտիրտեսակի:Անվտանգությունը, փաթեթավորումըևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված "Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի" և "Մնդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի:*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	3000	24000	8	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	8	2018թ. Դեկտեմբերի 15
21	15898000	Խմորիչ	Հայաստան	Չոր, գործարանայինփաթեթավորված, չափածրարված, խոնավությունը՝ 8 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներիև «Մնդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի: Պիտանելիությանմնացորդայինժամկետը ոչ պակաս 80 %:*Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:*	կգ	3000	6000	2	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	2	2018թ. Դեկտեմբերի 15
27	15863200	Սև թեյ	Շռիլանկա	Թեյսևբարձրորակտեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ "Մնդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքի 8-րդհոդվածի:Պարտադիր պահանջ՝ գործարանային փաթեթավորված արտադրողի անվանումով, պահպանման և պիտանելիության ժամկետի գործարանային նշումով:	կգ	8000	16000	2	Ք. Գյումրի Շիրակացի 21շ <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ	2	2018թ. Դեկտեմբերի 15

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

****Ապրանքների մատակարարել չվնասվասելով արտաքին փաթեթավորումը*

*****Խստիվ պահպանել օրենսդրական նորմերը , առաջնորդվել "Մնդամթերքիանվտանգությանմասին" ՀՀօրենքիդրույթներով:*

Հավելված N 2
« 05 » դեկտեմբերի 20 17 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

<<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>>ՓԲԸ
ք.Գյումրի, Շիրակացի 21
Հայէկոնոմբանկ ԲԲԸ Գ/Մ
Հ/Հ 163128117575
ՀԿՀՀ 05533967

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ՌՈԶԱ-92» ՍՊԸ
Ա. Անտիկյանի
Հասցե՝ ք. Գյումրի, Թետչերի 5<<Ինեկոբանկ>>ՓԲԸԳ/Մ
Հ/Հ 20501220200310001
ՀԿՀՀ 05518416

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
Պատվիրատուն՝իդեմս _____և
Պայմանագրիկողմը՝իդեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալմատակարարումներիկատարմանվերաբերյալբոլորհաշիվ-ապրանքագրերըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասըևկցվումեն:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն